

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի նոյեմբերի 20-ի N 59-Ա որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2017

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան	3
I. Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ.....	4
II. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ.....	9
III. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը.....	10
IV. Հանձնաժողովի բյուջետային մուտքերի ապահովումը և պահպանման ծախսերի նախահաշիվը.....	11

ՆԱԽԱԲԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը 2018 թվականի տարեկան գործունեության ծրագիրը մշակել է՝ հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Սահմանադրությունը, «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգիրքը և Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրային ուղղությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կարգավորում է էներգետիկայի (էլեկտրաէներգետիկա, ջերմամատակարարում, գազամատակարարում), հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով), ջրային համակարգերի (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) բնագավառները՝ օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Ծրագրում ներկայացված են Հանձնաժողովի կողմից 2018 թվականին իրականացվելիք աշխատանքները՝ ըստ գործունեության բնագավառների.

- Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ
 - Էներգետիկա, ջրային համակարգ,
 - Հեռուստատեսություն, ռադիո, հեռահաղորդակցություն (էլեկտրոնային հաղորդակցության) ու փոստային կապ,
 - Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ
 - Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը,
 - Հանձնաժողովի բյուջետային մուտքերի ապահովումը և պահպանման ծախսերի նախահաշիվը:

Ներկայում Հանձնաժողովի կողմից տարվում է հստակ քաղաքականություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման, ազատ տնտեսական մրցակցության պաշտպանության, ձեռնարկատիրության զարգացման, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհա-

գրության ընդլայնման և մատչելիության ապահովման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման, գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ:

Հանձնաժողովն իր բնականոն աշխատանքը շարունակելու է նաև 2018 թվականին՝ ապահովելով ընդունվող որոշումների կոլեգիալությունը, համապատասխանությունը գործող օրենսդրությանը, կարգավորման թափանցիկությունը և հրապարակայնությունը: Գործունեությունը կազմակերպվելու է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով, իրականացվելու են ուսումնասիրություններ և ստուգումներ: Իր իրավասությունների շրջանակում մասնակցելու է տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակման աշխատանքներին:

2018 թվականին Ազգային ժողովի քննարկմանը կներկայացվի «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որը պայմանավորված է գործող օրենքը Արցախի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանեցնելու, հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության կարգավորման բնագավառում կարգավորման հիմնական սկզբունքների ավելացման, կարգավորող մարմնի իրավասության շրջանակի և լիազորությունների հստակեցման, Հանձնաժողովի անդամի նկատմամբ քաղաքական զսպվածության սահմանման, Հանձնաժողովի նախագահի լիազորությունների հստակեցման, Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգման, ֆինանսավորման կազմակերպման, ինչպես նաև կարգավորող մարմնի հետ կապված այլ հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությամբ:

Հանձնաժողովը սույն ծրագրով ներկայացնում է կարգավորվող ոլորտների առկա իրավիճակը և 2018 թվականին կատարվելիք աշխատանքների ամբողջությունը և գործելու է սույն ծրագրի ու ծրագրից բխող ենթածրագրերի շրջանակներում:

I. Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ

Հանրային ծառայությունների կարգավորման առանցքային ուղղություններն են.

- **էներգետիկայի բնագավառը և ջրային համակարգը,**
- **հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի բնագավառները:**

Արցախի Հանրապետությունում գործում է մեկ՝ 30 000 կՎտ-ից բարձր տեղակայված հզորությամբ (Սարսանգ ՅԷԿ, 50 ՄՎտ դրվածքային հզորությամբ) և 16՝ մինչև 30 000 կՎտ տեղակայված հզորությամբ հիդրոէլեկտրակայան (փոքր ՅԷԿ-եր), որոնց դրվածքային հզորությունը գործարար ծրագրի համաձայն կազմում է 60,526 ՄՎտ: Ընդհանուր էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքը միասին կազմում է 436,901 մլն. կՎտ/ժ: Կառուցման փուլում է գտնվում 10 փոքր հիդրոէլեկտրակայան՝ 43,996 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 270,835 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքով:

2018 թվականին Արցախի Հանրապետությունում կանխատեսվում է ևս յոթ փոքր հիդրոէլեկտրակայանների արտադրության լիցենզիաների տրամադրում՝ կառուցման ժամանակահատվածով, որոնց դրվածքային հզորությունը կկազմի 40,5 ՄՎտ:

Գործարկումից հետո միջին տարեկան հաշվով ակնկալվում է ավելի քան 214,8 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիայի արտադրություն:

Ներկայում կառուցվող տասը փոքր հիդրոէլեկտրակայաններից չորսում կառուցման ավարտից հետո կսկսվի էլեկտրական էներգիայի արտադրություն: Դրվածքային հզորությունը կկազմի 18,083 ՄՎտ, էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 93, 685 մլն կՎտ/ժ:

Հանձնաժողովը, ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից, 2018 թվականին շարունակելու է **էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգերի** կարգավորման իրավական դաշտի բարեփոխումները՝ իրավական ակտերի լրամշակման և կատարելագործման միջոցով:

Մասնավորապես.

- «էներգետիկայի մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխությունների կատարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի կողմից շարունակվելու է արտադրության լիցենզիաների տրամադրումը, որոնք կներառեն էլեկտրական էներգիա արտադրող կայան կառուցելու, էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և շուկայի կանոններով վաճառելու իրավունք: Աշխատանքներ կտարվեն ընկերություններին տրամադրված գործունեության լիցենզիաների պայմանների վերահսկողությունը շարունակական դարձնելու, նշված դրույթը օրենքի պահանջ դարձնելու, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգերը ժամանակակից շուկայական պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Քննարկվելու է.

- «Գնումների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ հանրային կազմակերպությունների գնումների կատարման առանձնահատկությունների սահմանման և դրանց վերապահման հարցը,

- ԼՂՀ ջրային օրենսգրքում լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների բարելավմանը և կատարմանը վերաբերող փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցը,

- Կնշակվեն էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման կարգը, այդ իրավիճակներում արտահանման նպատակով էլեկտրական էներգիայի առուվաճառքի (բաշխող-հաղորդող) պայմանագրի և ներկրման նպատակով էլեկտրական էներգիայի առուվաճառքի (հաղորդող-բաշխող) պայմանագրի և բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի նոր օրինակելի ձևեր՝ ամրագրելով հիմնական և կարևոր իրավունքներն ու պարտականությունները, որոնք էական դեր են խաղում մատակարար-սպառող հարաբերություններում,

- Փոփոխություններ և լրացումներ կկատարվեն սակագների հաշվարկման մեթոդիկաներում. մեծ ուշադրություն կդարձվի նյութական ծախսերի և կատարվող ներդրումների չափերի ներառմանը սակագներում:

Չեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում լիցենզավորված երեք ընկերություններից գործունեություն է ծավալում մեկ ընկերություն, իսկ մյուս երկու ընկերությունները լիցենզիաներով նախատեսված գործունեության տեսակներով ներկայում չեն զբաղվում: Հանձնաժողովի կողմից տրամադրված են **ռադիոհաճախականությունների** օգտագործման թույլտվություններ 13 ընկերությունների: **Չեռուստատեսության և ռադիոյի** բնագավառում տրամադրված արտոնագրերի (լիցենզիաների) հիման վրա ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) գործունեությամբ զբաղվում է 11, իսկ հեռուստաձայնագրերի հեռարձակմամբ (վերահեռարձակմամբ)՝ չորս ընկերություն, որից երկուսը՝ եթերային և երկուսը՝ կաբելային: Արցախի Հանրապետությունում գործում է մեկ հանրային հեռուստառադիոընկերություն:

Բնագավառին վերաբերող ընթացակարգերին համապատասխան՝ 2018 թվականի ընթացքում **շարունակվելու են.**

- ուսումնասիրվել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների ստացման համար ներկայացվող պահանջների կատարումը,
- քննարկվել 2019 թվականի ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, փոփոխման, վերածնակերպման) և ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների չափերի վերաբերյալ առաջարկությունները,
- ռադիոռելեային կապի և շարժական ռադիոկապի նոր կայանների տեղադրման, աշխարհագրական տարածքի փոփոխման, շահագործումից հանելու և այլ տեխնիկական տվյալների փոփոխման դեպքերում՝ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կատարվել համապատասխան փոփոխություններ թույլտվության պայմաններում,
- օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացվել աշխատանքներ տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման կարգերի պահպանման նկատմամբ,
- սիրողական ռադիոյին վերաբերող իրավական դաշտի կանոնակարգման աշխատանքների արդյունքում՝ 2018 թվականին Արցախի Հանրապետությունում ռադիոսիրողական գործով զբաղվելու ցանկություն ունեցող քաղաքացիների ներգրավումը, համապատասխան թույլտվությունների տրամադրման գործընթացի կազմակերպումը և աջակցումը որակավորման չափանիշներին սիրողական ռադիոօպերատորների համապատասխանությունը ստուգելու որակավորման քննությունների կազմակերպման հարցերում:

Լիցենզավորում

Հանձնաժողովի կարգավորման տիրույթում գտնվող ոլորտների լիցենզավորման կարգերի լրամշակումն ու կատարելագործումը մշտապես գտնվում են Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում:

Հանձնաժողովը մշտապես հետևում և հետևելու է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին, ինչպես

ընկերություններից պահանջվող հաշվետվությունների, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող մոնիթորինգների միջոցով:

Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի բնագավառներում լիցենզավորման ուղղությամբ կիրականացվեն հետևյալ հիմնական միջոցառումներն ու աշխատանքները.

- շարունակվելու են էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհագրության ընդլայնումը և մատչելիության ապահովումը, գործարար միջավայրի բարելավման աշխատանքների իրականացումը և օրենսդրության պահանջների բավարարման դեպքում ցանցի կամ ծառայությունների մատուցման լիցենզիայի ստացման հայտեր ներկայացրած տնտեսավարողների լիցենզավորումը,

- համագործակցելով ոլորտի իրավասու մարմնի հետ՝ հայտնաբերվելու և օրինական դաշտ են ներգրավվելու առանց լիցենզիայի էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձինք, կազմակերպվելու են մոնիթորինգներ և ստուգումներ: Հայտարարվելու են ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզավորման մրցույթներ մի շարք ազատ (չզբաղեցված) հաճախականություններում,

- էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի բնագավառների կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծությունների հիման վրա կազմվելու են ընկերությունների ֆինանսական և ծավալային ցուցանիշների վերաբերյալ համապատասխան ամփոփագրեր, որոնք թույլ կտան Հանձնաժողովին մշտապես հետևել կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին:

Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովը 2018 թվականին ևս հետևողականություն կդրսևորի իրականացվող սակագնային քաղաքականության կատարելագործման աշխատանքներում:

- Հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները՝ յուրաքանչյուր տարի կճշգրտվեն էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի սակագները,

- «Արցախէներգո» և «Արցախգազ» ՓԲԸ-ների մասնավորեցմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովն ուշադրության կենտրոնում կպահի սակագների և սպասարկան որակի հետ կապված հարաբերությունները,

- Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում սակագնային քաղաքականությունը կծավալվի ոլորտի գերիշխող օպերատորի կողմից ներկայացված կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ պահանջված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների կարգավորման ենթակա սակագների, փոստային կապի բնագավառում՝ փոստային կապի ունիվերսալ

ծառայությունների սակագների սահմանման և վերանայման հայտերի ուսումնասիրության, վերլուծության և համապատասխան սակագների սահմանման շուրջ: Ծառայություններ մատուցողների կողմից գանձվող վճարները կարգավորելիս ուշադրության կենտրոնում կպահվի այն հանգամանքը, որ տվյալ ծառայություններ մատուցողները հնարավորություն ունենան արդյունավետ կառավարման հիման վրա հանրությանը լիարժեք ծառայություններ մատուցելու և ստանալու կատարած ներդրումների իրական արժեքին համապատասխան շահույթ:

- Տնտեսական պայմանների փոփոխության դեպքում իրականացվելու են միջոցառումներ միտված մատուցվող ծառայությունների սակագների վերանայմանը, որակի բարելավմանը և ժամանակակից պահանջներին համապատասխանեցմանը:

Ներդրումային ծրագրեր

Հաշվի առնելով, որ էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումները լրիվ կամ մասնակի ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում և հետևաբար անմիջական ազդեցություն ունեն սակագների վրա, Հանձնաժողովը ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման նպատակով 2018 թվականի ընթացքում շարունակելու է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը:

Էներգետիկայի բնագավառում փոքր ՀԷԿ-երի կառուցման խրախուսման ուղղությամբ տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին: Այնուհանդերձ.

- աշխատանքներ կտարվեն սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության, թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշների հավաստիության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Դրանց մակարդակի ճշգրտումը հնարավորություն կտա առավել հասցեական և արդյունավետ իրականացնելու ներդրումները,

- նախատեսվում է գազասպառման համակարգում ներդնել մատակարարի նկատմամբ կիրառվող տույժեր՝ հաստատված կանոնների պահանջները խախտելու համար:

Աշխատանքներ են տարվում ինտերնետ ծառայության հասանելիության աշխարհագրությունը ընդլայնելու ուղղությամբ:

Հանձնաժողովը աշխատում է խրախուսել ընկերությունների այն բոլոր նախաձեռնությունները, որոնք կնպաստեն էլեկտրաէներգետիկայի, տեղեկատվական և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը, լայնաշերտ (արագագործ) ինտերնետ հասանելիության ծառայությունների բարելավմանը:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում 2018 թվականի գործունեությունը, ինչպես և նախորդ տարիներին, ուղղված կլինի Արցախի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցության պաշտպանության և խրախուսման, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորման, ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության ուղորտներում առաջնահերթ խնդիրների լուծմանը:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսավարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման և Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը ավելի կիրառական կդարձվի ստուգումների, հսկիչ գնումների և դիտանցումների միջոցով:

Գերիշխող սուբյեկտների բացահայտման և գործունեության վերահսկողության ուղղությամբ աշխատանքներ կծավալվեն տնտեսության մրցակցային իրավիճակը, այդ թվում, ապրանքային շուկաներում կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների քանակը, գերիշխող դիրքի առկայության ազդեցությունը գնահատելու և հետևելու նպատակով:

Կուսումնասիրվեն նոր ապրանքային շուկաներ և աշխատանքներ կտարվեն մրցակցային դինամիկան պարզելու և վերլուծելու նպատակով: Ապրանքային շուկաների ուսումնասիրությունը իրականացվում է նոր մեթոդաբանությամբ, որն ուղղված է ապրանքային շուկաներում տեղի ունեցող փոփոխությունները դիտարկել ոչ թե ստատիկ իրավիճակում, այլ դինամիկ փոփոխությունների համատեքստում:

Ապրանքային շուկաներում գերիշխող դիրքի չարաշահումը՝ մասնավորապես չհիմնավորված գների կիրառումը բացառելու նպատակով, Հանձնաժողովի կողմից կշարունակվեն իրականացվել շաբաթական դիտանցումները, ինչպես նաև վերլուծության կենթարկվեն նրանց գործունեության վերաբերյալ կիսամյակային տեղեկատվությունները: Կշարունակվեն նաև առաջին անհրաժեշտության և գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների կողմից իրացվող ապրանքների շաբաթական դիտանցումները:

Նախատեսվում են միջոցառումներ ապրանքային շուկաներում իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանման, կիրառման, կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման դեպքերի հայտնաբերման և ուսումնասիրության ուղղությամբ:

Հանձնաժողովը պարբերաբար իրականացնելու է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ՝ ազատ և արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և կատարելագործման նպատակով:

Ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման, անհրաժեշտ միջավայր ապահովելու և տեղի ունեցող փոփոխությունների դրական կամ բացասական դինամիկան արձանագրելու նպատակով կուսումնասիրվեն նոր ապրանքային շուկաների կառուցվածքները և շուկայում առկա մրցակցային խնդիրները: Ուսումնասիրությունների ընթացքում ուշադրությունը կենտրոնացվելու է առաջին անհրաժեշտության ապրանքային շուկաներում գնագոյացման ընթացքի վրա,

քանի որ այն կենսական նշանակություն ունի հասարակության համար և հաճախ է մտահոգությունների տեղիք տալիս:

Քարենպաստ մրցակցային միջավայրի ապահովում

Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառելու ուղղությամբ Հանձնաժողովի կողմից շաբաթական կտրվածքով մանրածախ առևտրի ոլորտում իրականացվող դիտանցումների ընթացքում կուսումնասիրվեն ապրանքների վրա մատնանշվող տեղեկությունների արժանահավատությունը, օրենսդրության պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև հնարավոր մոլորեցման հետ կապված խնդիրները:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտման և դադարեցման նպատակով 2018 թվականին կշարունակվեն իրականացվել շաբաթական դիտանցումներ, քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումների, ՁԼՄ-ների հրապարակումների հիման վրա ուսումնասիրություններ:

Ուշադրության կենտրոնում կպահվեն մրցակցային միջավայրի արդի հիմնախնդիրները, աշխատանքներ կտարվեն հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և պետական օժանդակության կիրարկման ուղղությամբ:

III. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը

Հանձնաժողովն իր գործունեությունը ծավալում է թափանցիկ և հրապարակային՝ ապահովելով հասարակության հետ արդյունավետ կապերի ամրապնդումը: Վերջինս հնարավոր է դառնում.

- զանգվածային լրատվության միջոցների, պետական կառույցների, գործարար հանրության, սպառողների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության,
- Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների և նրանց միջոցով նաև միջազգային կառույցների հետ համագործակցության շնորհիվ:

2018 թվականին, հավատարիմ մնալով իր թափանցիկ և հրապարակային գործելաոճին, Հանձնաժողովը ձգտելու է առավելագույնս նպաստել հանրության բոլոր շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Սահմանված կարգով թարմացվելու և համալրվելու է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջը: Լուսաբանվելու են համապատասխան բնագավառներում կատարված աշխատանքները, նախատեսվող ծրագրերը, տեղեկատվական նյութերն ու տեղեկանքները: Օպերատիվ արձագանքելու է «Թեժ գծի» միջոցով սպառողներից ստացված ահազանգերին, դիմում-բողոքներին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին:

Ըստ անհրաժեշտության կազմակերպվելու են հարցազրույցներ, ճեպագրույցներ, քննարկումներ:

Համագործակցություն. Հանձնաժողովը արդյունավետ համագործակցում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական, հեռուստատեսության և

ռադիոյի ազգային հանձնաժողովների և գործունեությանը առնչվող պետական այլ կառույցների հետ, ինչն իր դրական ներգործությունն է ունեցել աշխատանքների կատարման որակի ամբողջականության և աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության, վերապատրաստման վրա:

Ստորագրված համագործակցության հուշագրերի և համաձայնագրերի հիման վրա կազմված տարեկան աշխատանքային ծրագրերը շարունակվելու են արդյունավետ միջոցառումների իրականացումը, այն է՝ կարգավորման ոլորտի կատարելագործմանը նպատակաուղղված ուսուցողական և վերապատրաստման դասընթացները, սեմինար պարապմունքները, փորձի փոխանակման նպատակով կազմակերպվող փոխադարձ այցելությունները, համատեղ ուսումնասիրությունները և նիստերը: Համագործակցությունը նպաստելու է տեղում կիրառելու նպատակով առաջատար երկրների փորձին ծանոթանալուն, նորմատիվ ակտերի մշակման ու քննարկման աշխատանքներին գործուն մասնակցություն ունենալուն, մրցակցության համար բարենպաստ միջավայր ապահովելուն, մրցակցության քաղաքականության կիրարկման արդյունավետության բարձրացմանը, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հեռուստառադիոընկերությունների միջև արդեն ստեղծված համագործակցության դաշտի ընդլայնմանը:

Գործընկեր հանձնաժողովների պատվիրակությունների կազմում կշարունակվի Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությունը միջազգային միջոցառումներին:

Կշարունակվեն աշխատանքները ԼՂՀ Հանձնաժողովին՝ միջազգային համագործակցության մասնակիցը դարձնելու ուղղությամբ:

Հանձնաժողովը կհամագործակցի նաև պետական այլ մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց հետ իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու, փոխգործակցության և փոխօգնության ամրապնդման նպատակով:

IV. Հանձնաժողովի բյուջետային մուտքերի ապահովումը և պահպանման ծախսերի նախահաշիվը

2018 թվականին Հանձնաժողովի վերահսկողության ներքո կգտնվի կարգավորվող ընկերությունների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե մուտքերի ապահովման գործընթացը՝ պետական տուրքերը, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, կարգավորման պարտադիր վճարները: Ըստ կանխատեսումների՝ 2018 թվականին նշված աղբյուրներից պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 964 838,5 հազ. դրամ (կից աղյուսակ):

Հանձնաժողովի պահպանման և գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից՝ կարգավորման պարտադիր վճարների միջոցների հաշվին:

Հանձնաժողովի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագիրը հանրային քննարկման ներկայացնելու նպատակով հրապարակված է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

ԱՂՅՈՒՍԱԿ

2018 թվականի կանխատեսվող բյուջետային մուտքերի

Եկամտատեսակը	Գումարը (հազար ՀՀ դրամ)
Ռադիոհաճախականությունների օգտագործման վճարներ	768 523,2
Պետական տուրքեր	24 175,0
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ	172 140,3
Ընդամենը	964 838,5

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ